ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2005թ. հունիսի 8-ի թիվ 294 Ն որոշման

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԱՆՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Սույն ակտով կարգավորվում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգերում վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիության պահը:
2. Սույն ակտում օգտագործվող հասկացությունները կիրառվում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:
3. Վճարահաշվարկային համակարգ (այսուհետ՝ համակարգ) վճարահաշվարկային փաստաթղթի մուտքագրման պահ է համարվում այն պահը, երբ վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակցի համար վճարային գործիքը հասանելի դառնալուց հետո, սկսվում է վճարային գործիքի տվյալների մշակումը տվյալ մասնակցի կողմից: Սույն ակտի իմաստով վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակից է համարվում վճարման շղթայում ընդգրկված համակարգի առաջին մասնակիցը, ում ներկայացվում է վճարային գործիքը՝ այն տիրապետողի կամ վճարումը նախաձեռնողի կողմից: Սույն ակտի իմաստով վճարային գործիքի տվյալների մշակումը վճարային գործիքը բնութագրող տվյալների հետ այնպիսի գործողությունների իրականացումն է, որոնց արդյունքում վճարային գործիքը ընդունող համակարգի մասնակիցը կայացնում է որոշում՝ վճարային գործիքը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:
4. Վճարահաշվարկային համակարգ մուտքագրված վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում այն պահը, երբ իրականացվել է համակարգի մասնակիցների միջև ծագած դրամական պարտավորությունների վերջնահաշվարկը: Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների կիրառման նպատակով վճարահաշվարկային համակարգ մուտքագրված վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում վճարահաշվարկային փաստաթղթի՝ վճարահաշվարկային համակարգ մուտքագրվելու պահը:

(4-րդ կետը լրաց. 07.07.17թ. թիվ 143 Ն)

5. Վճարահաշվարկային համակարգի կանոններով վճարահաշվարկային փաստաթղթի անվերադարձելիության պահ սահմանված լինելու դեպքում այդ կանոններին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համաձայնություն կարող է տրվել, եթե դրանցում նշվում է, որ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների կիրառման նպատակով վճարահաշվարկային

փաստաթղթի անվերադարձելիության պահ է համարվում վճարահաշվարկային փաստաթղթի՝ համակարգ մուտքագրվելու պահը:

(5-րդ կետը լրաց. 07.07.17թ. թիվ 143 Ն)